



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆՑ
ՏԱՐԵՇՐՋԱՆԸ ԵՉՐԱՓՎԱԿՈՒԵՑԱԲ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմէն ներս, տասնամեակներէ ի վեր կը գործեն Ս. Գրոց խմբակները: Սուրբ Գրոց սերտողութիւններ եւ դաստիարակիչ բնոյթով հաւաքներ տեղի կ'ունենան ծխական մեր եկեղեցիներուն մէջ, հովանաւորութեամբ Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ առաջնորդութեամբ Թեմիս հոգեւոր հայրերուն, Հայր. Առաք. Եկեղեցւոյ եկեղեցասէր Եղբայրակցութեան եւ նուիրեալ սպասարկուներուն:

Երեքշաբթի, 26 Յունիս 2007-ի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, կատարուեցաւ Երեքշաբթի երեկոյեան հոգեւոր խորհրդածութիւններու տարեշրջանին եզրափակումը: Նախաձեռնութեամբ Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ կազմակերպութեամբ Թեմիս Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքին, անցնող տարեշրջանին հոգեւոր խորհրդածութիւններ եւ Աստուածաշունչի սերտողութիւններ տեղի ունեցան վերոյիշեալ եկեղեցւոյ մէջ, ամէն Երեքշաբթի երեկոներուն:

Ամբողջ տարեշրջանին, անելի քան 300 անձեր մասնակցեցան սերտողութեանց, ուսումնասիրելով Մատթեոսի Աւետարանը: Երեկոները վարեց Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Այս տարեշրջանի եզրափակիչ սերտողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Հայր Պարթեւը, Եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, Հոգաբարձական կազմը եւ սերտողութեան մասնակիցները: Իր խորհրդածութեան մէջ Սրբազանը անդրադարձաւ Ս. Գիրքին ունեցած անժամանցելի կարեւորութեան, շեշտելով Պօղոս Առաքեալի արձանագրած այն ճշմարտութիւնը, թէ Սուրբ գիրքերը զօրութիւնը ունին մեր միտքերը իմաստութեան բանալու, Յիսուս Զրիստոսի հաւատալու եւ այդ հաւատքով՝ փրկուելու, քաջ գիտնալով՝ որ «Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ գիրքերը օգտակար են՝ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար, որպէսզի Աստուծոյ նուիրուած մարդը կատարեալ ըլլայ, ամէն տեսակի բարի գործերու պատրաստ» (Բ. Տմ 3.15-17):

Սրբազան Հայրը յիշեցուց ներկաներուն, թէ Հայ Եկեղեցին անընդմիջաբար անցեալէն մինչեւ այսօր մեծ կարեւորութիւն տուած է Ս. Գրքի սերտողութեան ու հասկացողութեան՝ հաւատացեալի կեանքէն ներս,

գայն նկատելով միակ հարազատ ու ջինջ աղբիւրը՝ Աստուծոյ խօսքին ու յայտնութեան: Հայ Եկեղեցւոյ ծեսը իր ամբողջութեանը մէջ՝ շարականներն ու մաղթանքները, քարոզներն ու աղօթքները մեծաւ մասամբ քաղուած են Աստուածաշունչէն:

Մէքբերելով Եղիշէ պատմիչի Աստուծոյ խօսքին մասին գրութիւնը, Առաջնորդ Սրբազանը կարդաց այն հատուածը, ուր մեծ վարդապետը Աստուծոյ խօսքը կը նմանցնէ ջուրի, գոր «Երբ ծարաւ հոգիով խմես գայն՝ երբեք ծանրութեամբ չես լեցուիր, այլ կը թեթեւնաս եւ դարձեալ կը փափաքիս խմել»:

Սերտողութեան աւարտին, բոլոր ներկաները ծնրադիր երգեցին «Տէ՛ր, ողորմեա՛ն եւ Տէրունական Աղօթքը, ապա Սրբազան Հօր սրտաբուխ աղօթքով եւ «Պահպանիչ»ով արձակուեցան խաղաղութեամբ՝ Աստուծոյ Հոգիով զօրացած ու քաղցրած:

CONCLUSION OF BIBLE STUDY AT ST. MARY'S CHURCH

For many years Bible study classes and educational gatherings have been taking place within the churches of the Western Prelacy under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

On the evening of Tuesday, June 26, the last Bible study of St. Mary's Church in Glendale took place prior to the commencement of summer break. The sessions, which are led by Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian, have been taking place every Tuesday since the start of the year with over 300 faithful in attendance each week.

The Prelate attended this year's concluding session during which he commended Father Barthev, parish pastors, Board of Trustees, and the participants. The Prelate pointed out that the Armenian Church in the past has consistently given and continues to give great importance to the study and comprehension of the Bible, taking into account that the Bible is the only true Word of God. He then reminded the faithful that the rites of the Armenian Church, hymns, sermons, are almost entirely derived directly from the Bible.

The session concluded with a group prayer and the benediction by the Prelate.